ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան № 1. 1941 թ.

Պրոֆ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ*

*Ինչպես հայտնի է, հայերը հին՝ դարերում ժամանակի հաշիվը կատարել են արեգակնային տիպի տոմարով։ Այդ տեսակի տոմարում տարին ընդունվում է հավասար 365 օրվա և բաժանվում է 13 ամսվա՝ 12-ը 30-ական օրերից իսկ 13-րդը՝ 5 օրից։ 365=12×30+5։*

*Եթե ընդունենք մեկ տարվա տևողությունը մոտ 365¼ օր (չհաշված պակասող րոպեները և վայրկյանները), ապա մենք կտեսնենք, որ արեգակնային տարվա տևողությունը, նման տեսակի օրացույցներում, ¼ օրով ավելի կարճ է իսկական տարվա տևողությունից և դրա պատճառով արեգակնային տարվա սկիզբը (նոր տարվա օրը—ամանորը) պետք է անընդհատ առաջ ընկներ՝ իսկականի հետ համեմատած՝ տարեկան ¼ օրով, կամ չորս տարին մեկ օրով։ Աստղաբաշխ Սոզիգենը, Հուլիոս Կեսարի օրոք, այդ սխալից ազատվելու համար՝ առաջարկեց՝ չորս տարուց երեքը ընդունել հավասար 365 օրվա, իսկ չորրորդը՝ 366 և այդ եղանակով կարողացավ ամանորի առաջխաղացումը վերացնել[1])։*

*Այդ առաջարկն ընդունվում է և դրվում թե հին և թե նոր կոչված տոմարների հաշիվների հիմքում։*

*Սակայն արեգակնային տոմարով օգտվող ժողովուրդները հնում, թեև գիտեին այդ, բայց և այնպես շարունակում էին հաշիվը տանել 365 օրական տարիներով, որի պատճառով նրանց օրացույցներում ամանորը 4 տարին մեկ օրով առաջ էր ընկնում։ Այդպես շարունակվելով՝ նոր տարվա օրը համընկնում էր հաջորդաբար տարվա բոլոր օրերի հետ և որոշ ժամանակաշրջանից հետո նորից վերադառնում իրեն նախկին տեղը։*

*Այդ վերադարձն ընդունված էր անվանել «տարեկանաստղ»։ Պարզ հաշիվները ցույց են տալիս, որ վերև հիշված ժամանակաշրջանը պետք է հավասար լիներ 4 տ.×365=1460 տարվա, բայց ոչ իսկական՝ 356¼ օր պարունակող տարվա։ Եթե մենք հիմա չորս տարին մի անգամ մեկ օր ավելացնելով՝ հասնում ենք մեր նպատակին, ապա այն դարերում վարվում էին մի փոքր այլ կերպ. նրանք 1460 տարուց հետո ավելացնում էին մի ամբողջ տարի և այդպիսով վերականգնում ժամանակի ճիշտ հաշիվը։*

*Նրանց հաշվով ստացվում էր հետևյալը. 1461×365=1460×365¼=533265 օրվա։*

*Այդ ժամանակաշրջանը Եգիպտոսում կոչվում էր Սոթիսի շրջան կամ տարի, իսկ հին Հայաստանում «Հայկյան շրջան»։*

*Այդ անվան ծագումը Եգիպտոսում կապված էր մեր երկնակամարի ամենապայծառ աստղի Սիրիուսի (եգիպտական լեզվով՝ Սոթիս, իսկ հայերեն՝ Շնիկ կամ Շնաստղ) անվան հետ։ Այդ աստղի հելիակական ծագումը, այսինքն՝ նրա առաջին անգամ*

[1]) Հռոմեական օրացույցը արեգակնային տեսակի չի եղել, բայց աստղաբաշխ Սոզիգենը՝ լինելով եգիպտոսից՝ առաջարկում է Հ. Կեսարին ընդունել տարվա տևողությունը հավասար 365¼ օրվա։

*Կարդացված Հ.Ս.Ս.Ռ. Ժողկոմսովետին կից Ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարանի) գիտական սեսիայում 1940 թ. 29/X նիստում։

երևալը արշալույսի ժամին, տեղի էր ունենում (մեր թվականությունից առաջ) հուլիս ամսի 19-ին և Սոթիսի շրջանի առաջին տարում համընկնում էր Նեղոս գետի հորդացման ժամանակի հետ, որպիսի հորդացումը հսկայական նշանակություն ուներ Եգիպտոսի ամբողջ անտեսության համար։

Հայերը.հնում երկար դարերի ընթացքում, գործածել և օգտվել են նման տիպի արեգակնային տոմարով։ Շատ հետաքրքրական է, թե նախ, որ թուականին հայերը հրաժարվեցին այդ տեսակի օրացույցից. երկրորդ՝ թե հայկական արեգակնային տոմարի կամ Հայկյան շրջանի ապոկատաստազի տարին որ թուականին է տեղի ունեցել, երրորդ՝ աստղաբաշխորեն որ աստղի հելիակալիկ ծագման հետ է կապված եղել ապոկատաստազի տարին և չորրորդ՝ հայերը երբվանի՞ց են սկսել արեգակնային տեսակի օրացույց գործածել։

Որպեսզի մեր ասածը պարզ լինի, բերենք մի փոքրիկ սխեմա.




Երբ Հայաստանում բնակչությունը վարում էր պարզ պրիմիտիվ տնտեսություն (խաշնարածություն...), նրա բնիկների օրացույցն անկասկած պիտի լուսնային լիներ, սխեմայում այդ ժամանակաշրջանին համապատասխանում է OA-հատվածը։ Լուսնային տիպի պարզ օրացույցից հայերը անցնում են ավելի բարեփոխված՝ արեգակնայինին, որով և օգտվում են մոտ 18 դար. սխեմայում այդ ժամանակաշրջանին համապատասխանում է AB հատվածը։

Շատ հետաքրքրական է այն հանգամանքը, որ հայերը քրիստոնեություն ընդունելուց հետո շարունակում են անփոփոխ պահպանել իրենց օրացույցի տիպը և եկեղեցականները կրոնական տները հաշվելու համար ստիպված են լինում դիմել Հուլյան տոմարի օգնությանը։ Այդպիսով, սկսած III-րդ դարի վերջերից՝ հին Հայաստանում միաժամանակ գործածության մեջ են լինում տարբեր տեսակի օրացույցների սիստեմ։ Դրանցից մեկը, ինչպես մի քանի անգամ հիշեցինք, արեգակնայինն էր, որը և համարվում էր քաղաքացիական օրացույց իսկ մյուսը սովորական, ներկայումս գործածվող Հուլյանը, համարվում էր կրոնական։ Առաջինում ամիսներն իրար հավասար էին (բոլորը 30-օրական) բայց նոր տարվա օրը շարժական էր, իսկ մյուսում՝ ամիսները իրար անհավասար էին, բայց նոր տարվա օրը մշտական և հաստատուն տեղ ուներ։

Առաջինը՝ ամսվա օրերի հաշիվը վարում էր հերթական հաշվով՝ 1-30, իսկ երկրորդը յոթնօրյա շաբաթներով։ Հայ տոմարագետների առջև դրված է եղել մի դժվարություն խնդիր հնարել կանոններ և կազմել աղյուսակներ՝ մի տոմարով տված ամսաթիվը հեշտ կերպով մյուս տոմարի ամսաթվին վերածելու համար և ընդհակառակը։

Երևի դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հայերն ունեցել են բավական մեծ թվով տոմարագետներ, որոնցից աչքի են ընկնում իրենց աշխատություններով՝ Հովհաննես Կոզեռնը (XI գ), Հովհաննես սարկավագը (XI գ.) Հակոբ Ղրիմեցին (XV գ.), Ազարիան (XVI գ.). և ուրիշ շատերը։ Մեր Մատենադարանում գտնվող ձեռագիր աշխատություններից այդ տեսակետից շատ հետաքրքրական են №№ 1999 (2019), 1973 (2027), 1978 (2038) ձեռագրերը։

Սխեմայում AB-ին զուգահեռ տարված գիծ CB-ն համապատասխանում է քրիստոնեական եկեղեցու կողմից Հուլյան տոմարի օգտագործման ժամանակաշրջանին։ Քաղաքական և տնտեսական հանգամանքներից ստիպված՝ հայերը հրաժարվում են իրենց քաղաքական տոմարից և վերջնականապես ընդունում, բոլոր ազգերի նման, Հուլյան տոմարը (սխեմայում՝ B կետից սկսած)։ Ե՞րբ կատարվեց այդ, այսինքն՝ որ թվականին հայերը հրաժարվեցին իրենց

ինքնուրույն քաղաքացիական տոմարից։ Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք մի քանի հեղինակների մոտ։ Բացատրությունը հետևյալն է. 1317 թվականին հայկական օրացույցի ամանորը համընկնում էր հունվար ամսի 1-ի հետ և այդպիսով երկու տեսակի օրացույցների (հին հայկական և հուլյան) նոր տարվա օրը կատարվում էր միաժամանակ։ Օգտվելով այդ հանգամանքից և նկատի ունենալով երկրի քաղաքական վիճակը՝ Ադանայի ժողովում (44-րդ) որոշվում է անցնել Հուլյան տոմարին։ Բայց դրա հետ միասին հայերը շարունակում են պահպանել իրենց տոմարով ընդունված դարագլուխը, քանի որ հայերին մինչև 18-ր դարը համարյա թե անծանոթ մնաց այսպես կոչված Քրիստոսի ծննդից հաշվվող դարագլուխը։ Քաղաքական պատճառները պարզ են. XIV դարում հայկական խոշոր ինքնուրույն ֆեոդալական իշխանություններից գոյություն ուներ միմիայն Ռուբինյաններինը (Կիլիկիայում), որը նույնպես մոտենում էր իր վախճանին. իսկ բնակչությունն արդեն բազմակողմանի հարաբերություններ (կուլտուրական, առևտրական և այլն) էր հաստատել Արևմտյան Եվրոպայի հետ։ Ահա այդ պայմաններում Ադանայի ժողովը նպատակահարմար գտավ անցնել Հուլյան տոմարին։ Հետևապես, սխեմայի վրա B կեսի մաս կարող ենք դնել 1317 թվականը։

Անցնենք երկրորդ հարցին՝ ապոկատաստասի թվականը որոշելուն։ Ըստ մեր կատարած հաշիվների և պատմական տեղեկությունների ապոկատաստասի տարի Հայկական շրջանի համար համընկնում է 428 թ., երբ նավասարդի մեկը եղել է օգոստոս ամսի 11-ին։

Նշած բազմաթիվ տվյալներից բերում ենք միմիայն մի քանիսը։

ա) Խոսելով Գնելի սպանության մասին և բերելով Բուզանդի խոսքերը, թէ փոխեն ճաշեալ տաւնսական օրն յաւասանայր կերակրեն ի յայնմ աւուր սոն դիպեցաւ (ԲՉՆ, 121)՝ Օրմանյանն ասում է, որ «արդ, հայկական շարժական տոմարի հաշվով, նավասարդի առաջին օրը կիրակի համընկած է 359-ին, համապատասխանելով հռոմեական տոմարի օգոստոսի 29-ին»։ Օգոստոսի 29-ից մինչև 11-ը կազմում է 17 օր և ամանորը կարող էր 17 օր առաջ ընկնել 4×17=68 տարվանից հետո, այսինքն՝ 359+68=427 թվականի վերջին։ Ուրիշ խոսքով՝ նավասարդի մեկը կարող էր լինել օգոստոսի 11-ին սկսած 428 թվականից։

բ) «Բազմավէպ» 1904 թ., յունիս թիվ 6, էջ 275-ում կարդում ենք, որ ըստ Ղ. Փարպեցու և ըստ Սոփ. Բ. 35 Սահակ Պարթևը վախճանվել է 439 թվականի նավասարդ ամսի 30-ին, օրն հինգշաբթի, որը համապատասխանի 439 թ. սեպտեմբերի 8-ին. Նույն հաշիվները դարձյալ ցույց են տալիս, որ նավասարդի մեկը տեղի է ունեցել 428 թվականի օգոստոսի 11-ին։

գ) Հովհաննես Կոզեռնը, XI դ. հայտնի աստղագետն իր «Մեկնութիւն տոմարի, Ջոր արարեալ Յոհաննէսի վարդապետի. որ մականուն էին Կոզ-եռն» (Մատենադարան, ձեռագիր № 1999—2019, էջ 73) գրում է. «Ի յառաջին ամի թուականին լինէր զատկին ի Մարտի Է-ններ. և յերկրորդ ամի թուականին դառնալոց եր լինէր զատկին յԱհկի ԻԴ-ն»։

Էջ. 71-ում և 74-ում նույն հեղինակը նույնպես գրում է. «գիտա, զի յառաջին ամի թուականին զարնանային հաւասարակածն յԱհկի ԺԴ-ն էր»[1]։ «Այլ և դարս գիտել արժան, է զի զարնանային հաւասարակածն որ է ի մարտի ի»…

Մյուս աղբյուրների տվյալներից մեզ հայտնի է, որ նոր թվականի առաջին տարում, այսինքն՝ 552 թվականին, զատկական լուսնի լրումը պիտի լիներ ապրիլի 13-ին։

Այսպիսով, ըստ Կոզեռնի տվյալների՝ 552-ին

Մարտի 7-ը համապատասխանել է ապրիլի 13-ին։
Ահկի-ի 13 » » մարտի 20-ին։

Այդ պայմաններում նավասարդի մեկը

[1] Պետք լինի հիշած՝ ԺԴ-ն էր։

համընկնում է հուլիսի 11-ի հետ. իսկ օգոստոսի 11-ից մինչև հուլիսի 11-ը կազմում է 31 օր և ամանորը կարող էր առաջ խաղալ 31 օր՝ 4×31=124 տարվա ընթացքում։ Հետևապես, հանելով 551-ից 124 կստանանք էլի 427, որպիսի հանգամանքը նորից պարզ է անելու, որ նավասարդի մեկը եղել է օգոստոսի 11-ին՝ 427 թվականին հետևող տարում, այն է 428 թվականին։

Բերենք մի այլ ապացույց ևս.

դ) «Ներսեսի մահվան թվականը պետք է անկասկած դնել 373-ին, որովհետև 374-ին տեղի ունեցավ Պապին սպանությունը, շատ մը եղելութիւններէ ետքը, իսկ իբր ամսաթիվ նշանակուած է հրոտից ամիսը և հինգշաբթի օր (Սոփ. Զ, 112) և շարժական տոմարի հաշվով կհանդիպեն հրոտից 5, 12, 19 և 26 օրերը։ Աւգերեան հայրնտիր մը առնելով հրոտից 5-ին կդնէ Ներսեսի մահը (Վրք. Գ. 393) և այս հարմարութիւնը իբր ստուգութիւն կընդունինք նշանակելու թվականին, որ 373-ին կհամապատասխանէ յուլիս 25-ին...»[1]։

Ըստ այս տեղեկության՝ 373-ին հրոտից ամսվա 30-ը պետք լինի օգոստոսի 19-ին, իսկ 20-ից սկսվել են Աւելեաց օրերը և այդ թվականին նավասարդի մեկը կամ ամանորը համընկել է օգոստոսի 25-ին։ Օգոստոսի 25-ից մինչև 11-ը կազմում է 14 օր և ամանորի 14 օր առաջ խաղալու համար պահանջվում է 56 տարի, բայց նկատի ունենալով՝ որ մեկ օր առաջ ընկնելու համար պահանջվում է առհասարակ չորս տարի, մենք ունենում ենք 373 թվականից մինչև ապոկատաստազի տարին 54 տարի և այդպիսով ստացվում է նորից 373+54=427 թվականը, որին հաջորդող տարին՝ 428-ը պետք լիներ ապոկատաստատային։

Այսպիսով մենք գալիս ենք այն հաստատուն կարծիքին, որ Հայկայ շրջանի ապոկատաստազի կամ, ինչպես հայերն ասել են, «Մասնանցներու նահանջ տարին» տեղի է ունեցել 428 թվականին և այդ թվականին նավասարդի մեկը կամ ամանորը եղել է օգոստոս ամսի 11-ին։

Մենք միանգամայն սխալ ենք համարում այն հեղինակների պնդումները, որոնք ապոկատաստատային տարվա ամանորի օրը օգոստոսի 11-ին նշանակում են 432 կամ մի այլ թվականին։ Հետագայում Հովհաննես սարկավագը նույնպես աշխատել է իր անշարժ տոմարի տարեգլուխ ընդունել օգոստոսի 11-ը, լավ գիտենալով, որ այդ օրը կարող է որպես ամանոր ծառայել միմիայն Հայկայ շրջանի սկզբում, բայց նրա նպատակն է եղել չհորինել նահանջ տարիների՝ ավելացնել այդ օրվա տեղը։

Մենք տեսանք, որ Եգիպտոսում 1460 տարիների ժամանակաշրջանը կոչվում էր Սոթիսի շրջան և տվեցինք դրա բացատրությունը։ Նույն ժամանակաշրջանը հին Հայաստանում կոչվում էր Հայկայ շրջան։ Դրա բացատրությունը գտնելը դժվար չէ։ Հին Հայաստանը սահմանակից է եղել Բաբելոնին և Քաղդեացոց երկրից նրան բաժանողը եղել են միմիայն Կորդվաց լեռները, որոնք երկու ժողովուրդների հարաբերությունների համար մեծ խոչընդոտ հանդիսանալ չէին կարող։ Բաբելոնում աստղաբաշխությունը և նրա անհարազատ որդի աստղագիտությունը զարգացած էին մեծ չափով դեռ սկսած XXX դարից մեր թվագրությունից առաջ։ Այդ գիտությունները, ժամանակի ընթացքում, թափանցում են հին Հայոց երկիրը, և հայերը (Խալդերը) դեռ շատ հնուց լավ ծանոթ էին թե՛ աստղաբաշխության և թե՛ աստղագիտության։ Երկնակամարի շատ աստղերին կամ համաստեղություններին տրված են տեղական հայկական անուններ։ Երկնակամարի ամենագեղեցիկ համաստեղությանը, որը ուրիշ ազգերի կողմից անվանվում է Օրիոնի համաստեղություն, նվիրված էր հայ առասպելական նախահայր և հերոս Հայկին և այդ համաստեղությունը կոչվում էր «Հայկն»։ Այդ համաստեղությունը շատ մոտ է գտնվում Մեծ Շան համաստեղությանը, որի գլխավոր աստղը Սիրիուսը կամ Սոթիսն է։ Եվ եթե առաջին հազարամյակում մեր թվարկությունից առաջ Սոթիսի հելիակական ծագումը տեղի էր ունե-

[1] Էջ 571։

նում հուլիսի 19-ին, ապա նույնը Հայկի համատեղության համար տեղի էր ունենում օգոստոսի 11-ին։ Եվ եթե եգիպտացիները Սոթիսի հելիակալիկ ծագման և ամանորի համընկման թուականն ընդունում էին որպես Սոթիսի շրջանի սկիզբը, ապա հայերն էլ Հայկի համատեղության հելիակալիկ ծագման և ամանորի համընկնելու թվականը համարում էին իրենց Հայկյան շրջանի բնկզբնական տարին։ Այդպիսի համընկնում եգիպտական Սոթիսի շրջանի համար եղել է 139 թվին, իսկ Հայկականի համար 428-ին (քրիստոնեական տարեթվով)։ Այդ թվականները միևնույն ժամանակ հանդիսանում էին նաև «ապոկատաստատային» թվականներ։ Եգիպտական և Հայկական ապոկատաստատային թվականների միջև տարբերությունը կազմում է 428—139 = 289 տարի։ 289 տարում Եգիպտական ամանորը պիտի առաջ ընկած լիներ մոտ 72 օրով (289:4 = ~72) և հուլիսի 19-ի փոխարեն, 428 թուականին, կհանդիպեր մայիսի 8-ին։ Այդ ամսաթվից հետ հաշվենք 3 ամիս, յուրաքանչյուրը 30 օրից, կստանանք՝

1) Մայիսի 8-ից մինչև հունիսի 7-ը—մեկ ամիս 2) Հունիսի 7-ից մինչև Հուլիսի 7-ը եւ մեկ ամիս 3) Հուլիսի 7-ից մինչև Օգոստոսի 6-ը—եւ մեկ ամիս

Հիմա օգոստոսի 6-ի վրա ավելացնենք 5 օր (Աւելեաց), կստանանք օգոստոսի 11—(428) թվականի հայկական ամանորի օրը։ Վերև բերված թվերը համապատասխանում են հայկական X-րդ, XI-րդ XII-րդ և Աւելեաց ամիսներին։ Այդ հանգամանքը վկայում է, որ մեր եզրակացությունները միանգամայն ճիշտ են, քանի որ արեւմտյան և ռուս հեղինակները նշում են հետևյալը. „Старый египетский календарь в несколько измененном виде хранится и в армянском календаре: первые три месяца египетского года точно соответствуют трем последним месяцам армянского календаря; за этими последними месяцами в армянском календаре следуют пять дополнительных дней, и таким образом для остального года армянские месяцы начинаются пять дней спустя после месяцев старого египетского календаря"[1]).

Ինքնուրույնության հարց է ծագում. արդյոք հայերը իրենք են ստեղծել նման տիպի տոմար թե՞ այն ընդօրինակել են մյուս ժողովուրդներից։

Հին Հայոց երկրում նման տիպի տոմար ստեղծելու պայմանները չէին եղել։ Նման տիպի տոմար կարող էր զարգանալ տնտեսական բարձր աստիճանի հասած մարդկային հասարակության մեջ, ինչպիսին էր Եգիպտոսը, և պարզ է, որ հայերը պետք է ընդօրինակած լինեն կամ անմիջապես Եգիպտոսից կամ թե՝ մի այլ ժողովուրդից, որը իր հերթին ընդօրինակել էր Եգիպտոսից։ Դրա մասին կխոսենք մի քիչ հետո, երբ կորոշենք հայերի կողմից նման տիպի օրացույցն ընդունելու ժամաշրջանը։

Ժամաշրջանը որոշելու համար դիմենք մի քանի կողմնակի ավյալների, քանի որ ոչ մի հին կամ նոր աղբյուրում այդ հանգամանքը հիշատակված չէ, իսկ ուղղակի ճանապարհով դժվար է որևէ դրական եզրակացության գալ։ Այսպիսի մի շարք աղբյուրներ ասում են, որ 428-ին իբր թե լրանում էր երկրորդ Հայկյան շրջանը[2])։ Եթե այդ ճիշտ լիներ՝ մենք պիտի ունենայինք՝

2494 մ. թ. ա.—1033 մ. թ. ա.—428-ին

զուգադիպում—I-ին ապոկատաստատ—II ապոկատաստատ կամ ուրիշ խոսքով՝ հայերն ընդունել են այդ տիպի արեգակնային օրացույցը 25 դար մեր թվագրությունից առաջ, այսինքն՝ այն ժամանակ, երբ հայերն իբր պետություն գոյություն չունեին։

Դա մի առասպելական զուգադիպում է, ինչպես և Ս. Գրքի աշխարհաստեղծման զուգադիպումը։ 1033-ին մ. թ. ա. նույնպես ընդունվել չէր կարող, քանի որ այդ ժամանակաշրջանում հին Հայաստանի բնակիչները խալդերն էին, որոնք, ճիշտ է կուլտուրապես բավական բարձր զարգացման աստիճանի էին հասած, բայց նրանք գտնվում էին մերձավոր Բաբելոնի և Ասորեստա-

[1]) Россовская „Календарная даль веков", стр. 29.

[2]) Գ. Ալիշան «Տօմար և տօնացոյց», 1896, § 5։ Օրմանեան «Ազգապատում» 1912, էջ 303։

նի ազդեցության տակ. այդ ազդեցության շրջաններում ամենուրեք իշխում էր Բաբելոնի լուսնա-արեգակնային տիպի օրացույցը. իսկ հայերը Եգիպտոսի հետ անմիջական հարաբերությունների մեջ լինել չէին կարող, քանի որ հենց նույն վերևում հիշված պետությունները հսկայական պատնեշի նման նրանց բաժանում էին Եգիպտոսից։

Առաջադրված հարցը մնում է լուծել կողմնակի ճանապարհով։ Դեռ VII դարի հեղինակ Անանիա Շիրակացին, իր տոմարագիտության աշխատության մեջ, դրա ԽԲ-ում «Զի՞նչ է ամիսն», խոսելով ժամանակը «ամիս» միավորներով չափելու սովորությունն առաջանալու մասին, շեշտում է, որ հայկական նոր տարվա օրը միշտ համընկել է գարնանային հավասարակածի օրվա կամ գարնանամուտի օրվա հետ։ Դա շատ հետաքրքրական է հենց այն տեսակետից, որ ինքը հեղինակն ապրում էր VII դարում, երբ ամանորը տեղի էր ունենում արդեն հունիս ամսին։

Այդ մասին ավելի պարզ խոսում է Ալիշանը («Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց», Վենետիկ, 1895, էջ 139)։

«Առաջին նավասարդ, որ երկու կերպ տարեգլուխ դնելով, բնական և քաղաքական, ըստ յետնոյս՝ այժմու օգոստոս ամսոյ մէջ սկսի, ըստ առաջնոյն՝ ի մարտի հասարակածի կամ ի գարնանամտի...»։ Կան նաև այլ բազմաթիվ տեղեկություններ, որոնք ապացուցում են վերև բերված հանգամանքի ճշմարտությունը։ Սակայն այդ ճիշտ է այն ժամանակաշրջանի վերաբերյալ, երբ հայերը օգտվում էին դեռ լուսնային կամ լուսնաարեգակնային տիպի օրացույցերով, որպիսիների մեծագույն մասի տարեգլուխը, ըստ սովորության, սկսվում էր գարնանային գիշերահավասարի օրվանից։ Բարեփոխության ենթարկելով իրենց օրացույցը և անցնելով արեգակնային տիպի օրացույցի գործածության՝ հայերը, ըստ երևույթին, չեն հրաժարվել իրենց հիմնական տարեգլխից և ընդունել են տարեգլուխը համատեղված գարնանային գիշերահավասարի օրվա հետ։ Բայց, ըստ նոր ընդունված տոմարի, այդ տարեգլուխը արդեն մնայուն չէր և չորս տարին մեկ օրով առաջ գնալով ընկնում էր և իրականում այն առաջ խաղալով, ինչպես տեսանք, 428 թվականին համընկնում է օգոստոսի 11-ի հետ։ Հիմա մենք կարող ենք գտնել այսպես. մի որոշ թվականի, երբ հայերը ընդունեցին արեգակնային տիպի տոմար՝ ամանորը տեղի ունեցավ մարտի 20-ին։ Առաջ խաղալով չորս տարին մեկ օր՝ այդ ամանորը 428 թվականին տեղի ունեցավ օգոստոսի 11-ին։ Բանի տարում ամանորի նման առաջխաղացում կարող էր տեղի ունենալ։ Հաշվենք օրերի թիվը սկսած մարտի 20-ից մինչև օգոստոսի 11-ը հետևյալ կարգով՝ մարտ(20)+փետրվար(28)+հունվար(31)+դեկտեմբեր(31)+նոյեմբեր(30)+հոկտեմբեր(31)+սեպտեմբեր(30)+օգոստոս(21)=222 օր և հետևապես 4տ.×222=888 տարի, այսինքն նման առաջխաղացման համար պահանջվում է 888 տարի։ Այդ 888 տարուց՝ 428 տարին մեր թվագրությունից է, իսկ մնացած 460-ը մինչև մեր թվագրությունը*։ Այստեղից բխում է մեր հիմնական եզրակացությունը, որ հին Հայոց երկրում ժամանակի հաշիվը սկսել են պահել արեգակնային սխեմի տոմարով, սկսած 460 թվականից մեր թվագրությունից առաջ։

Ընդունելով V դ. կեսերին մ. թ. ա. արեգակնային սխեմի օրացույց՝ հայերը գործածել են այդ՝ համարյա թե անփոփոխ պահելով, մինչև 1317 թ. և հետևապես, մենք կարող ենք ասել, որ հայկական քաղաքացիական օրացույցը գործածության մեջ է մնացել՝ 460+1317=1777 տարի— մոտ 18 դար։

Մի քանի բառերով աշխատենք բացատրել թե ինչու V դարում մ. թ. ա. կարող էր տեղի ունենալ օրացույցի նման բարեփոխություն։ VII դարում մ. թ. ա. Կիրոսի և նրա որդի Կամբյուզեսի օրով կազմակերպվում է համաշխարհային երկրորդ պետությունը (առաջինը համարվում է Ասորեստանը), որը ընդգրկում է իր սահմանների մեջ ամբողջ առաջավոր Ասիան և Եգիպտոսը։ Դարիոսը արդեն տալիս է այդ

* Մի քանի տարիների տարբերությունն հնարավոր է և ավելի ճիշտ կլինի նշանակել մ. թ. ա. V դ. կեսերին։
Լ. Մ.

լայնածավալ պետությունը ամփոփած մի կազմակերպություն, որի շնորհիվ Պարսից իշխանության ներքո ժողովուրդների համար ստեղծված են շփման և փոխհարաբերության անհրաժեշտ պայմանները: Այդ պայմանների շարքում պետք դասել բարձրորակ և լավ միճահված պահպանվող ճանապարհները, մեծ չափով զարգացած առևտրական կապերը. այդ ժամանակ է, որ պարսկական բանակում բոլոր ժողովուրդների զորամասերը շփվում էին իրար հետ և այլն: Նման պայմաններում կուլտուրապես ավելի բարձր աստիճանում գտնվող ժողովուրդները պետք է իրենց ազդեցությունը թողնեին կուլտուրապես ավելի հետ մնացածների վրա: Պարսից տերության ամենաառաջավոր ժողովուրդներն էին եգիպտացիներն ու բաբելացիները: Տոմարագիտական խնդիրներում այդ երկու ժողովուրդների քրմությունը մեծ նվաճումներ ուներ: Բայց եթե եգիպտացիները զարգացրել և համարյա թե գագաթնակետին էին հասցրել արեգակնային սիստեմի տոմարը, ապա բաբելացիները նույնն արել էին լուսնարեգակնայինի վերաբերյալ: Սակայն եգիպտական սիստեմի օրացույցը շատ պարզ կազմություն ուներ, իսկ բաբելացիներինը, ընդհակառակը, շատ բարդ կազմություն (նրա պատճենն է հրեականը): Հայ քրմությունը նույնպես հասել էր որոշ նվաճումների աստղաբաշխության ասպարեզում և նա, ենթարկվելով կուլտուրապես ավելի զարգացածների ազդեցությանը՝ կարծես չի ընդօրինակում իր ավելի մոտ հարևան բաբելացիների բարդ սիստեմը, այլ գերադասում է ավելի հեռավոր եգիպտացիների— պարզ և հարմար տոմարական սիստեմը: Հարցն այս ձևով դնելիս՝ պետք նախ ընդունել, որ հայերը, առանց որևէ միջնորդի, ինքնուրույն կերպով են ընդօրինակել տոմարի եգիպտական սիստեմը:

Բայց կարելի է առաջադրել և մի այլ հիպոթեզ. ծանոթանալով հայերի և հարևան մի շարք ժողովուրդների տոմարների հետ (պարսկական, վրացական, աղվանական և այլն) մենք տեսնում ենք, որ նրանք էլ օգտվել են նման տիպի տոմարական սիստեմով և այս հանգամանքից կարող ենք գալ այն եզրակացության, որ այդ ընդօրինակումը համարյա ընդհանուր բնույթ է կրել. իսկ այս վերջին փաստը կարելի է բացատրել միմիայն նրանով, որ, ըստ երևույթին, Աքեմենյան տիրապետության ժամանակ կատարված է եղել տոմարի բարեփոխություն:

Շատ հնարավոր է, որ Պարսից աշխարհակալ պետության տարբեր սատրապություններում գործածվելիս են եղել տարբեր տեսակի տոմարական սիստեմներ, որպիսի հանգամանքը պետք է շատ ու շատ դժվարացներ փոխ-հարաբերությունները, ժամանակը հաշվելու տեսակետից: Նման դրությունից դուրս գալու մի միջոց կար միայն, այն է՝ ընդունել ամբողջ պետության համար եղած կամ գործածվող տոմարական սիստեմներից որևէ մեկը: Գերադասությունը պետք տրվեր եգիպտականին, որովհետև նա իր կազմությամբ շատ պարզ է և հարմար, իսկ պարսիկները՝ ընդունելով այդ տոմարական սիստեմը՝ դրանով այն համարյա թե պարտադիր էին դարձնում բոլոր հպատակ ժողովուրդների համար, քանի որ հայերը միշտ պարսիկների հետ սերտ կապակցության մեջ էին գտնվում. նրանք սկզբում պետք ծանոթանային այդ տոմարական սիստեմների հետ և ապա ընդօրինակեին այն:

Այսպես թե այնպես՝ հայերը մոտ 460 թ. մ. թ. առաջ անցնում են եգիպտական տոմարական սիստեմին և մոտ 18 դար անընդհատ գործածում այդ տոմարը:

Եգիպտական տեսակի տոմարական սիստեմի հատկանիշներից մեկն էլ այն է, որ նա ժամանակի յոթնօրյա շաբաթի միավոր չի ընդունում. Նրա ամիսը բաժանվում է կամ 3 դեկադների (տասնօրյակ) կամ 6 պենտադների (հնգօրյակ): Ընդունելով տոմարական այդ սիստեմը՝ հայերը նույնպես պետք է հրաժարվեին 7-օրյա շաբաթներից և նրանց ամսվա յուրաքանչյուր օրը պետք է հատուկ անուն կրեր: Հայերի օրացույցում դեկադի կամ պենտադի հետքեր չեն հայտնաբերված: 7-օրյա շաբաթի գաղափարը հայերի մոտ նորից վերականգնված է արդեն քրիստոնեության ընդունելուց հետո:

*Ինչպես ասված է սկզբում, նոր տոմարական սիստեմով տարվա տևողությունը համարվում էր հավասար 365 օրվա, բաղկացած 13 ամսից։ Թեև այդ ամիսների անունները հանրածանոթ են, բայց և այնպես հիշեցնենք համառոտ կերպով. 1) Նավասարդ (30 օր), 2) Հոռի (30 օր), 3) Սահմի (30 օր), 4) Տրէ (30 օր), 5) Քաղոց (30 օր), 6) Արաց (30 օր), 7) Մեհեկան (30 օր), 8) Արեգ (30 օր), 9) Ահեկան կամ Ահկի (30 օր), 10) Մարերի (30 օր), 11) Մարգաց (30 օր) 12) Հրոտից կամ Հրորտից (30 օր) 13) Ավելյաց (5 օր)։*

*Ալիշանն իր վերը հիշատակված աշխատությունում բերում է նաև ամսվա օրերի անունները։ Ըստ նրա, Ավելյաց ամսվա օրերի անունները նվիրված են եղել այն դարերում հայտնի հինգ մոլորակներին։ Ավելյաց ամսի օրերը կոչվել են՝ 1) Լուծ, որից հետո առաջացել է Փայլածու բառը* (Меркурий), *2) Եղջերու, հետագայում դարձել է Արուսյակ կամ Լուսաբեր* (Венера), *3) Ծիրաւորի, հետագայում Հրատ* (Марс), *4) Արտախույր, հետագայում Լուսնթագ* (Юпитер) *և 5) Փառազնոտի, հետագայում Երևակ* (Сатурн)։

Ամսվա օրերի անունները հերթական կարգով

| | | | | |
|---|---|---|---|---|
| *1-ին* | *օրը* | *կոչվել* | *է* | *Արեգ* |
| *2-րդ* | » | » | » | *Հրանդ* |
| *3-րդ* | » | » | » | *Արամ* |
| *4-րդ* | » | » | » | *Մարգար* |
| *5-րդ* | » | » | » | *Ահրանք* |
| *6-րդ* | » | » | » | *Մազդեղ* |
| *7-րդ* | » | » | » | *Աստղիկ* |
| *8-րդ* | » | » | » | *Միհր* |
| *9-րդ* | » | » | » | *Ձոպաբեր* |
| *10-րդ* | » | » | » | *Մուրց* |
| *11-րդ* | » | » | » | *Երեզկան կամ Երազհան* |
| *12-րդ* | » | » | » | *Անի* |
| *13-րդ* | » | » | » | *Պարխար* |
| *14-րդ* | » | » | » | *Վանատ* |
| *15-րդ* | » | » | » | *Արամազդ* |
| *16-րդ* | » | » | » | *Մանի* |
| *17-րդ* | » | » | » | *Ասակ* |
| *18-րդ* | » | » | » | *Մասիս* |
| *19-րդ* | » | » | » | *Անահիտ* |
| *20-րդ* | » | » | » | *Արագած* |
| *21-րդ* | » | » | » | *Գրգուռ կամ ?* |
| *22-րդ* | » | » | » | *Կորդուիք* |
| *23-րդ* | » | » | » | *Ծմակ* |
| *24-րդ* | » | » | » | *Լուսնակ* |
| *25-րդ* | » | » | » | *Սփիւռ* |
| *26-րդ* | » | » | » | *Նպատ* |
| *27-րդ* | » | » | » | *Վահագն* |
| *28-րդ* | » | » | » | *Սէին* |
| *29-րդ* | » | » | » | *Վարագ* |
| *30-րդ* | » | » | » | *Գիշերավար* |

*Երկար դարեր հայերի կողմից գործածված եգիպտական շարժական տոմարը պետք է համարել գոյություն ունեցած և ունեցող ամենահաջող տոմարական սիստեմներից մեկը։ Նրա գլխավոր և միակ թերությունն այն է որ, ամանորը, շարժական է։ Այդ կարելի էր վերացնել շատ հեշտ կերպով, այնպես, ինչպես անում ենք մենք ներկայումս՝ ավելացնելով չորս տարվա ընթացքում մի օր և մացնելով դրանով նահանջ տարվա գաղափարը։ Այդպիսի առաջարկով հանդես են եկել մի քանի, տոմարական խնդիրներին լավ ծանոթ, անձնավորություններ՝ Անանիա Շիրակացին* (VII), *Հովհաննես Սարկավագը* (XI *դ.*) *և հետագայում Ազարիան* (XVI XVII *դ.*)։

*Առաջինի մասին Ստ. Ասողիկը*[1] *գրում է «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց՝ և հրամայէ Անանիայ Շիրակացւոյ կարգել զքրօնիկոնն հրաշագան, յորում զամսս մեր կարգեաց անշարժ։ Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրօնիկոնն և վախճանի կացեալ յաթոռն ամս զ»։*

*Շիրակացին,* պատմութեան վկայութեամբ, ջան ի վերայ եդեալ յաջողեցաւ բարեձեւել ըստ բոլոր ազգաց անուանց, *այսինքն հաստատուն,* յօրինեալ զկարգս նոյնպէս տոմարի *(Յավ. 118), բայց Անաստասի մահը խոչընդոտ հանդիսացավ ժողովի գումարման և տոմարը մնաց անփոփոխ։*

XI *դարի վերջին, երբ լրացավ հայկական առաջին ժամանակաշրջանը և դրա հետ էլ*

[1] *Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան «Պատմութիւն տիեզերական» ի Ս. Պետերբուրգ, 1885, էջ 104։*

միասին Աթանաս Տարոնեցու ամբողջ 532 տարիների համար կազմված տոնական օրերի աղյուսակները (որոնք հնարավորություն էին տալիս հուլյան տոմարով նշանակած տոնական օրերը փոխադրել և արտահայտել հայկական քաղաքացիական տոմարի ամսաթվերով) և երբ եկեղեցական աշխատողները տեսան, որ այլևս «հնար չէր նույն ցուցակէն օգտուիլ և գլուխը դառնալով նորէն կրկնել» և դրա հետևանքով առաջացավ «տոմարական տագնապ», հանդես եկավ Հովհաննես Սարկավագ վարդապետը և «իւրոց նորա յաջողեցաւ և զբազմաց փափաքելին և ոչ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տոմարն կարգեաց հայոց, փոխանակ շարժականին և անհաստատունին»[1]:

Հովհաննես Սարկավագի առաջարկած ռեֆորմը կարելի է բաժանել երկու մասի ա) Ամանորի օրը դարձնել անշարժ—այդ նպատակին նա հասնում է՝ մտցնելով նահանջ տարու գաղափարը՝ ընդունելով 3 տարին 365 օրից և 4-րդը՝ 366-ից: Դա միանգամայն խելացի և ցանկալի բարեփոխություն էր: բ) Ամանորի օրը, այսինքն նավասարդի մեկը նա «տեղափոխեց» և դրեց օգոստոսի 11-ին: Չմոռանանք, որ 1084 թ., երբ տեղի էր ունենում այդ ամբողջ անցուդարձը, նավասարդի մեկը (ամանորը) համընկնում էր հուլյան տոմարի փետրվարի 29-ի հետ և Հովհաննես Սարկավագը նավասարդի մեկը փետրվարի 29-ից տանում հասցնում է օգոստոսի 11-ին: Անա նրա այդ երկրորդ «բարեփոխության» իմաստը և նրա իրականացումը մինչև օրս մնում են անհասկանալի: Ճիշտ է որ, ըստ ոմանց կարծիքի—«արար զհաւասարութիւն ամենայն ազգաց տոմարին ընդ Հայոց (Կիր. 64), բայց և այնպես միանգամայն իրավացի է Մ. Օրմանյանը, երբ ասում է. «բայց չենք գիտեր, թէ ինչ ձեւով նաւասարդի մեկը փետրվար 29-էն մինչև օգոստոս 11 տարին, ինչ որ հիմն էր Հայկա շրջան կոչված 1460 տարիներու դրութեան» (Ազգապատում, §900): Հովհաննես Սարկավագի առաջարկները պաշտոնապես ընդունված չեն եղել քանի որ ոչ մի ժողովի քննության դրված չեն եղել, այլ միայն կարծիք կա, որ եկեղեցական կյանքում նրանք կիրառություն են գտել՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կարգադրության համաձայն: «Շարժականը շատ աւթեններու մէջ գործածուած կըգտնուի իբր քաղաքական տոմար, անշարժն ալ կյիշվի, աւելի եկեղեցական կիրառութեան մէջ»: Մենք կարող ենք ընդունել, որ Սարկավագից հետո հայկական, եգիպտական տեսակի շարժական տոմարը, որպես քաղաքացիական տոմար, մնացել է դարձյալ անփոփոխ. նրա փոփոխված ձևով օգտվել են միայն կրոնական կյանքում:

Չնայած այն հանգամանքին, որ Ադանայի 1317 թվի ժողովից հետո, հայերը պաշտոնապես հրաժարված են լինում հայկական հինական տոմարից, բայց և այնպես XVII դարի սկզբին հայկական գաղութներից մեկում՝ Նոր Ջուղայում, փորձ է կատարվում վերակենդանացնել այդ տոմարը, այսպես կոչված Ազարիայի տոմար անվան տակ: Ազարիայի առաջարկները նույնպես կարելի է բաժանել երկու խմբի. ա) շարժական տոմարն անշարժ դարձնելու համար էլի մտցվում է նահանջ տարու գաղափարը (չորս տարուց՝ մեկը) բայց մի փոքր այլ ձևով: Ազարիան՝ թողնելով անփոփոխ Ավելյաց ամսվա օրերի թիվը (5 օր) և ընդունելով առաջին 11 ամիսների տևողությունը հաստատուն՝ 30 օրից, միայն փոփոխական է դարձնում 12-րդ նիրհան ամիսը, որը սովորական տարիներում ունենում է 30 օր, իսկ նահանջ տարում 31 օր: բ) Ազարիան փոխում է նաև ամիսների անունները՝ տալով նրանց, ըստ իմ կարծիքի, ավելի հաջող անուններ և նույնպես ամանորի օրը նորից փորձում է օգոստոսի 11-ից վերադարձնել գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ը: Սակայն «Ազարիայի տոմարը» նույնպես մատնվում է անհաջողության, որովհետև այդ օրացույց հնարողները չեն հասկացել, որ տոմարական խնդիրները և նրանց փոփոխությունները չեն կատարվում երկրի և նրա քաղաքական ու տնտեսական կյանքից անկախ, այդ պատճառով էլ չի կարելի ամեն մի գյուղում ու

[1] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 64:

քաղաքում կամ գաղութում ինքնուրույն ամսաթական սիստեմ հնարել ու գործածել։

1793 թ. հրատարակված և գործածության դրված Ֆրանսիական ռեվոլյուցիայի օրացույցը շատ նմանություններ ունի հին հայկական օրացույցային սիստեմի հետ. նա էլ բաղկացած էր 12 ամսից, յուրաքանչյուրը 30 օրից և լրացուցիչ 5 օրից, որոնք կոչվում էին «սանկյուլոտիդներ»։ Տարվա սկիզբը (տարեգլուխ) սեպտեմբերի 22-ը՝ թագավորին իրավազրկող դեկրետի ստորագրման օրը և աշնանային գիշերահավասարի օր էր։ Նահանջ տարու տեղը նշանակված չէր. տոմարագետները՝ հիմնվելով իրենց դիտումներից՝ հայտարարում էին նահանջ տարին, որը կարող էր լինել 4 կամ 5 տարին մեկ անգամ։ Ամիսները բաժանված էին 3-ական դեկադների։

Ավարտելով մեր գիտության հիմնական խնդիրները, մի քանի խոսքով կանգ առնենք հայկական դարագլխի ընդունման թվականի վրա։ Ինչպես հայտնի է 353 թվականից սկսեցին օգտագործել Անդրեասեան 200-ամյա աղյուսակները, որոնք ավարտվեցին 552 թվականին, երբ տարվա ընթացքում «բոլոր տոները սկսան շփոթվել»[1], մինչև որ հատուկ հավաքած տոմարագետների ժողովը կարողացավ, հայտնաբերելով 532 ամյակը կարգի բերել բոլոր սխալ տոմարական հաշիվները։ Շարունակելու համար խոսքը տանք Մ. Օրմանյանին. «Արդ, 561-ին կաթողիկոս էր Հովհաննես Գաբեղյանը, 564-ին սկսան Սուրեն Մարզպանի հարստահարությունները, 571-ին սկսավ Վարդանի շարժումը, 572-ին եղավ կաթողիկոսի փախուստը։ Հետևաբար պատմության համաձայն է ըսել, թե մինչև որ Գաբեղյան պետք եղած տեղեկությունները առներ, տոմարական խնդիրներով զբաղելու առիթ չկրցավ գտնել, և զատկի տոները շարունակեցին առաջվա կերպով առանց հաստատուն ցուցակի։ Մովսես եղավ, որ հայրապետության բարձրանալեն ետքը, իրեն հատուկ նպատակ կարգեց զատկական տոնի կամ տոնական տոմարի գործը միանգամ ընդմիշտ կարգավորել, և Հայոց եկեղեցվո համար. հաստատուն կանոն մը ունենալ, առանց պետք ունենալու շարունակ տարիներու կարոտանալ... (Յավ. 85)։ Դիոնեսեան շրջանը կազմված էր արդեն, բավական էր զայն Հայ եկեղեցվո հարմարցնել, տարեկան տոներն ալ ըստ այնմ կարգադրել, բայց պետք էր որ հռոմեական ամիսներով կազմված ցուցակը հայկական ամիսներու վերածվեր, միանգամայն հռոմեական նահանջավոր տարիներու հաշիվները փոխանցվեին Հայոց շարժական ամսերին նահանջ չունեցող տարիներուն վրա, համաձայն Հայկա շրջանին հաշիվներու...»

Չմոռանանք, որ Մովսես ընտրվել էր կաթողիկոս 574 թվականին և միանգամից 532 տարվան վերաբերող աղյուսակները, որոնք պատրաստված էին հռոմեական՝ Հուլյան ամսերի թվականներով ու ամսաթվերով փոխարկել հայկական ամսերի թվականներին և ամսաթվերին շատ ու շատ դժվար գործ էր. դա պահանջում էր մեկ-երկու տարվա աշխատանք։ Գործը վերաբերվում էր կրոնական տոների ժամկետների որոշման, որովհետև աշխատանքները պահանջում էին շատ մեծ ճշտություն, որովհետև տոնը ժամանակին չկատարելն այդ դարում համարվում էր ամենամեծ հանցանքը։

Հետևապես ինչքան էլ աշխատեր և ջանկանար Մովսես II-ը՝ 574 թվականին պատրաստի աղյուսակներ ունենալ չէր կարող, որպեսզի ժողով հրավիրեր՝ նրանք հաստատելու համար։ Այդ պատճառով պետք է սխալ համարել այն հեղինակների կարծիքը, որոնք այդ ժողովը նշանակում են 574 թվականին։

«Ըստ այսմ ի հրամանէ մեծին Մովսէսի՝ բերքալ և գիտունք արուեստին» (Յավ. 85) գումարվեցաւ Դվնայ հայրապետանոցը, զոր կրնանք իբր Դվնայ Գ ժողով ընդունիլ և 584 թվականին նշանակել։ Հայոց գիտուններուն գլխավորն էր Աթանաս Տարոնեցի, Գլակայ Ս. Կարապետի մայրավանքի առաջնորդը, որ էր անեղծ տոմարի ամենայն ազգաց (Սամ. 8) և առաջնորդեց բոլոր հաշվողական գործողությանց։ Ժողովի

[1] Պատմ. Հայոց Կիրակոսի Գանձակեցւոյ, Թիֆլ. 1909, Ղուկասյան մատ. էջ 42։

կոչեն նախադասվեցաւ Էասի ցուցակը»[1]... Հետևապես Էասյան ցուցակը կամ նրա մեծ ինդիկտիոնը պաշտոնապես ընդունվել է 584 թուականին, Դվինի ժողովում: Այդ ժողովը նմանապես որոշեց Էասյան շրջանի ծայրը կապել Անդրեասյան շրջանի վերջին ծայրի հետ և այդ թվականը համարել կամ ընդունել որպես հայկական տոմարի դարագլուխ՝ սկսած 552 թվականից: Մի շարք պատմաբաններ շատ իրավացի կերպով Հայոց թիւ կամ Հայոց թուականը սկսում են 553 թվականից (Ստ. Ասողիկ, Սամ. Ան. և այլն), բայց և այնպես հանրածանոթ և ընդունված է հաշվել 552-ից: Հետևապես՝ Հուլյան տոմարի դարագլխից հայկականին անցնելու դեպքում պետք է նրանից «դուրս գալ» 551: Օրինակ 1941 թվ. ըստ Հուլյան տոմարի համապատասխանում է 1941—551=1390 թվականը Հայկական տոմարում:

Կրոնական տոները կարգավորելու համար Անդրեաս Բյուզանդացին կազմեց 200 տարվա մի աղյուսակ, որը ընդունվեց բոլոր քրիստոնեությունն ընդունած ժողովուրդների համար և գործածության մեջ դրվեց 353 թվականից: Հետևապես, այդ աղյուսակները գործածության համար պիտանի պիտի լինեին մինչև 552 թ. ներառեալ:

Երբ աղյուսակները վերջացան 553 թվականի սկզբին «ի ժամանակս թագաւորութեան ամբարշտին Յուստինիանոսի եղև լրումն Մ ամեակի արդեան Անդրէասու և սկսան շփոթել՝ լինելոց զատկաց և գլոց արուեստական տօմարաց» (Մատենադարան, ձեռագիր № 1973).

584 թվականին Դվինի Գ. ժողովը որոշեց կրոնական տոների հարցերում ղեկավարվել՝ Էասի հորինած 532-ամյակի ժամանակաշրջանով, բայց Էասյան և Անդրեասյան ժամանակաշրջանների ծայրերը փակցնել իրար այնպես, որ Էասյանը կազմի Անդրեասի ժամանակաշրջանի անմիջական շարունակությունը, այսինքն նրա (Էասյանի) առաջին տարին համարվի 553-րդ թվականը նրանք համապատասխեցին Էասի առաջին տարին Անդրեասյան ժամանակաշրջանի վերջին տարու, այսինքն 552-րդ թվականի հետ:

Եվ քանի որ Էասյան ժամանակաշրջանի առաջին տարին պայմանավորվեցին համարել որպես հայկական դարագլխի սկիզբ, հետևապես հայկական դարագլխի առաջին տարի հանդիսացավ 552-րդ թվականը: Դրա հետևանքով միշտ ընդունված է որևէ մի փաստ հայկական թվականով արտահայտելիս՝ Հուլյան տարեթվից հանել 551 և ընդհակառակը: Սակայն մի քանի պատմագիրք (Ստ. Ասողիկ, Սամ. Անեցի և ուր.) մեզ անհայտ հանգամանքներից ելնելով, ընդունում են հայկական դարագլխի առաջին տարին 553-րդ թվականը և այդ պատմագիրներից օգտվելիս՝ պետք է հանել կամ ավելացնել 551-ի փոխարեն 552.

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ամփոփելով զեկուցման մեջ բերված տվյալները և տեղեկությունները մենք գալիս ենք այն եզրակացության.

1) որ Հայերը հին և միջին դարերում պահպանել են իրենց հնագույն, արեգակնային տիպի տոմարը՝ առանց համարյա թե որևէ փոփոխության մինչև XIV դարի առաջին քառորդը:

2) քրիստոնեության մուտք գործելուց հետո Հայաստանում չեն հարմարեցրել իրենց տոմարը քրիստ. եկեղեցու պահանջներին, այլ՝ թողնելով այն անփոփոխ, գործածել են որպես քաղաքացիական կյանքի տոմար, իսկ կրոնական պահանջների համար ընդունել են և գործածել սովորական Հուլյան տոմարը:

3) իրենց քաղաքացիական տոմարից հայերը հրաժարվել են 1317 թվականին (Ադանայի 44-րդ ժողովում,) երբ Ռուբինյանների հայկական վերջին ֆեոդալական իշխանությունն արդեն մտնում էր իր վախճանին:

4) բազմաթիվ պատմական տվյալները բերում են մեզ այն եզրակացության, որ հայկական արեգակնային տոմարի, այսպես կոչված, ապոկատաստասը կայացել է 428 թվականի օգոստոսի 11-ին և որ այդ կապված է եղել Օրիոնի համաստեղության հելիակ-

1 Օրմանյան, Ազգապատում Ա, 571—572:

տիկ ծագման, այն համաստեղության, որը նվիրված է եղել հայոց ազգի առասպելական նահապետ Հայկ դյուցազնի անվանը։

5) նման տիպի տոմար, ըստ մեր հետազոտությունների, հայերը սկսել են գործածել V դարի կեսից մեր թվականությունից առաջ.

6) այսպիսով, հայերը ղեկավարվել են շարժական տոմարով մոտ 18 դար.

7) հայկական պարագլուխն ընդունելու թվականը պետք է համարել 584 թ., իսկ պարագլխի առաջին տարին 553-րդը՝ 552-ի փոխարեն։ Այդ ավելի ճիշտ կլիներ սակայն ելնելով որոշ հանգամանքներից, ընդունված է եղել 552-րդը։ Բայց և այնպես մի քանի պատմագրերի ժամանակագրական տվյալների ստուգման ժամանակ անհրաժեշտ է վերևում բերված հանգամանքը աչքի առաջ ունենալ, քանի որ նրանք պարագլուխ համարում են 553 թվականը (Ստեփան Ասողիկ, Կիրակոս Գանձակեցի և մյուսներ)։

## РЕЗЮМЕ


Подводя итог нашему докладу о некоторых вопросах армянского календаря, мы приходим к следующим положениям:

1) что армяне сохранили, почти без всяких изменений, свой древнейший календарь солнечного типа в течение древних и средних веков.

2) после принятия христианства, армяне не приспособили его к требованиям церкви, а оставив его без изменения, превратили его в гражданский календарь; для нужд церкви т. е. вычисления и обозначения дней религиозных праздников ввели календарь юлианский, который в гражданской жизни применения не имел, хотя и был знаком народу.

3) от своего гражданского календаря армяне отказались в 1317 г. (на 44-ом соборе, в Адане) в эпоху, когда последнее сомостоятельное армянское феодальное княжество Рубенидов находилось на краю гибели и вся Армения была разделена между разными завоевателями.

4) многочисленные исторические данные приводят нас к выводу, что т. н. апокатасатаз армянского календаря, типа солнечного, приходился на 11-ое августа в 428 г. н. э. и что он был связан с первым утренним восходом созвездия Ориона, которое в древней Армении было посвящено легендарному основателю армянского государства — Айку и носило название „созвездие Айка“, а сам календарь „цикл Айка“.

5) по нашим вычислениям календарь подобного типа был принят армянами в пол. V века до н. э.

6) таким образом, календарем подобного типа, армяне руководствовались в течение времени с средины V в. до н. э. до 1317 г. н. э. т. е. около 1800 лет.

7) точнее всего будет принять год офицального введения армянской эры 584 г. н. э., а его первым годом считать 553-ый вместо 552-го, хотя, по неизвестным соображениям в свое время был принят 552-ой год и по традиции принято считать с 552—го. Однако при проверке хронологических дат некоторых историков (Ст. Асогик, Киракос Гандзакеци и др.) это обстоятельство необходимо иметь ввиду т. к. они дают даты, считая первым 553-ый год.